

ԳԼՈՒԽ ԻԲ «ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԵՂԲԱՐՑ ՄԵՐՈՑ ԳԵՐԵԼՈՑ»

Գերութիւն կ'ըսենք այսօր եւ կանցնինք բառին վրայ թերթեւութեամբ, բայց մեր այս իրողութիւնքը անցած ժամանակներուն՝ մեր հարբ լաւ զգացեր էին բառին նշանակութիւնը իրենց սրտին ցաւերով, թէ ինչ էր գերութիւն: Երբ սարկաւագը «Ազատութիւն եղբարց մերոց գերելոց» կ'երգէր սեղանին վրայ, հազար հեկեկանաց ձայնք եւ ձեռք կը բարձրանային երկինք խնդրելով «գերելոց ազատութիւն»: Ոմանք հարբ, ոմանք զաւակունք, ոմանք ամուսինք, վերջապէս շատերն սիրելի կորուստ մը կը փնտրէին, որ շատ քիչ անգամ կը դառնար:

Գերութեան բարեբախտութիւնն էր նաեւ, երբ մէկը գթասիրտ տիրոջ մը վիճակէր, եւ դառն ծառայութեան ու տանջանաց չէր ենթարկեալ. վասնզի բաւական չէր ծնողաց, զաւակաց բարեբախտ վիճակի մը կորուստը, այլ նաեւ շղթայներու, ծեծի, նախատինքի, ուրացութեան հրաւիրանաց եւ բռնադատութեան պէտք էր տոկալ:

Բնութեան օրէնք, բնութեան կարծեցեալ եւ ընդունեալ օրէնք այս խառնակութեան խիստ ժամանակներուէ վեր ի վայր էին եղած բոլորովին, մանաւանդ խեղճ հայուն համար: Զրիստոնէութիւնն «լրացեալ զաւակը՝ արհամարի աչօք կը նայէր իր ծնողաց վրայ՝ եթէ գերութիւնն իրեն մեծութիւն եւ վայելք բերած էր: Երիտասարդ կրօնափոխ այրը մահմեդականի ամուսնացեալ՝ պատուհաս մ'էր իր առջի ընտանեաց վրայ: Գերեվար եալ գեղեցիկ աղջիկ մը երբեմն մեծութեան կը հասներ կին դառնալով երեւելի մարդու մը եւ տիկին կը լինէր, երբեմն յետին եւ ամենաթշուառ աղախին կը դառնար անգութ տիկնոջ մը՝ որու ծագումը եւ բախտը բարձր էր երկնսն եւ որուն նախանձը սոսկալի ու մահաբեր:

Այս տեսակ գերութեան վիճակը կար նաեւ բուն Հայաստանի ոչ շրջակայքը միայն՝ այլ եւ կեդրոնը, ուր արաբացին արմատ կը ձգէր, եւ ուր գրեթէ ամբողջ գաւառ մը եթէ ոչ ժողովրդեամբ գոնէ իւր